ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/08

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար «Տուբերկուլինի» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 19.01.2022թ. ներկայացված (20.01.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/08 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 19.01.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն՝ Առողջապահության նախարարությունը, 2022 թվականի կարիքների ձեռքբերման նպատակով հայտարարել էր «Տուբերկուլինի» «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որն իրականացվել էր էլեկտրոնային գնումների (eauction.armeps.am) համակարգի միջոցով (հայտերի բացումը տեղի է ունեցել 2021թվականի դեկտեմբերի 23-ին ժամը՝ 11:00-ին):

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/10» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցել են երեք ընկերություններ՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ, «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ:

Հարկ ենք համարում նշել, որ էլեկտրոնային աճուրդի առարկա Տուբերկուլինը հանդիսանում է ախտորոշիչ միջոց, որը կիրառվում է հիվանդերին ներմուծելու /ներմաշկային ներարկման ձևով/ եղանակով տուբերկուլեզ հիվանդությունը ախտորոշելու համար:

Մեր ընկերության կողմից ներկայացված Տուբերկուլինը ռուսական արտադրության է, ունի «Տուբերկուլեզային ալերգեն մաքրված ստանդարտ նոսրացմամբ» անվանումը, Ռուսաստանում ունի ԱՏԳ ԱԱ 3006 30 0000 դիրքը /կոդը/, որը հիմնավորվում է արտադրող գործարանի՝ «Սանկտ-Պետերբուրգի պատվաստանյութերի և շիճուկների գիտահետազոտական ինստիտուտ և բակտերիալ պատրաստուկների արտադրական ձեռնարկություն» ներկայացրած փաստաթղթերով:

Քանի որ Հայաստանի Հանրապետությունը ԵԱՏՄ անդամ է, ապա մրցույթին ներկայացված Տուբերկուլինը ողջ ԵԱՏՄ տարածքում, նաև ՀՀ-ում պետք է ունենա միևնույն ԱՏԳ ԱԱ 3006 30 0000 դիրքը /կոդը/:

Համաձայն ՀՀ-ում ԱԱՀ հարկման օրենքի ԱՏԳ ԱԱ 30006 30 0000 դիրքը /կոդը/ մաքսազերծման ժամանակ հարկվում է ԱԱՀ-ով, իսկ վաճառքից չի հարկվում ԱԱՀ-ով:

Հաշվի առնելով վերոնշվածը, մեր ընկերության կողմից ներկայացրել է գնային առաջարկ՝

արժեք 16155000 ՀՀ դրամ + ԱԱՀ 0 ՀՀ դրամ-գումար 16155000 ՀՀ դրամ, որի գումարը նվազ է քան արձանագրություն N 2 /առ 14.01.2022թ./-ով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի գնային առաջարկը:

Աճուրդին մասնակցել է նաև «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն, որը ներկայացրել է վերջնական գնային առաջարկ՝ արժեք 14400000 ՀՀ դրամ + ԱԱՀ 2880000 ՀՀ դրամ = գումար 17280000 ՀՀ դրամ:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքների հետ կապված կազմվել է արձանագրություն N 2 առ 14.01.2022թ., ըստ որի հաղթող է ճանաչվել «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն, որը ներկայացրել է վերջնական գնային առաջարկ՝ արժեք 14200000 ՀՀ դրամ + ԱԱՀ 2840000 ՀՀ դրամ գումար 17040000 ՀՀ դրամ:

Բողոքի իրավական հիմքն են հանդիսանում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, 46-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետը, 50-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1-ին ենթակետը:

Բողոքի ապացույցներն են հանդիսանում՝ ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետը և ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017թվականի N 1317-Ն «Ավելացված արժեքի հարկից ազատման արտունությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» որոշման Հավելված 3-ի 1-ին կետը և 3-րդ կետի՝ 1-ին և 2-րդ ենթակետերը, «Սանկտ-Պետերբուրգի պատվաստանյութերի և շիճուկների գիտահետազոտական ինստիտուտ և բակտերիալ պատրաստուկների արտադրական ձեռնարկություն» տրանադրված փաստաթղթերը և գրությունը

Խնդրում եմ Ձեզ վերանայել Առողջապահության նախարարության կողմից «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքները՝ մերժելով «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ների գնային առաջարկները՝ ԱԱՀ-ի սխալ կիրառման փաստով:

Քանի որ Հայաստանի Հանրապետությունը ԵԱՏՄ անդամ է, ապա մրցույթին ներկայացված Տուբերկուլինը ողջ ԵԱՏՄ տարածքում, նաև ՀՀ-ում պետք է ունենա միևնույն ԱՏԳ ԱԱ 3006 30 0000 դիրքը /կոդը/»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.01.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ առողջապահության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 21.01.2022թ. թիվ ՎԳ/06.3/1489-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 2022 թվականի հունվարի 20-ի Ձեր թիվ ԲՔԱ-ԳՆ/1/1025-2022 գրության՝ Առողջապահության նախարարությունը ներկայացնում է իր դիրքորոշումը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/10» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ:

Բողոքաբերի այն պնդմանը, թե «ՋԻԱՐՋԻ» և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված արտադրանքը հարկման ենթակա չէ (քանի որ ապրանքային անվանացանկի դասիչը 3006300000 է), նշված գնման ընթացակարգի շրջանակներից դուրս է և ընդունելի չէ, քանի որ համաձայն գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների, գնահատման համար հիմք է ընդունվում մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, որի մեջ ներառված են գնային առաջարկները: Բացի այդ, համաձայն ՀՀ Կառավարության 18.05.2017թ. «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ 2-րդ և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների հայտերը անմիջապես մերժվում են և ենթակա չեն գնահատման:

Միաժամանակ հայտնում եմ, որ 2021 թվականին Առողջապահության նախարարության կողմից նույն գնման առարկայի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/13» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ նույն բողոքաբերի («Նատալի Ֆարմ» ՍՊԸ) կողմից 2021 թվականի հունիսի 22-ին ներկայացվել է նույնաբովանդակ բողոք (ԳՆՔԱ-ՆԳ-2021/43), որը քննելուց հետո ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձի կողմից կայացվել է որոշում՝ բողոքը մերժելու վերաբերյալ: Բացի այդ վերոնշյալ 2021 թվականի գնման ընթացակարգի շրջանակում Առողջապահության նախարարության կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից տուբերկուլինի համար դուրս գրված հարկային հաշիվների (կցվում են) մեջ ներառված է ԱԱՀ-ը:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից բողոքում բարձրացված հարցերին՝ կապված ԱԱՀ-ով հարկման և մասնակիցների կողմից ԱԱՀ-ի սխալ կիրառման հետ, հայտնում եմ, որ վերջինները և դրանց կարգավորումները դուրս են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների շրջանակներից:

Կից Ձեզ եմ ներկայացնում «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2022/10» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.01.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/08 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2022/08 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար «Տուբերկուլինի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ են ներկայացրել «Նատալի Ֆարմ», «ՋԻԱՐՋԻ» և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերությունները:

2. «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է այն փաստը, որ գնման ենթակա ապրանքը՝ տուբերկուլինը, գտնվում է «ԱՏԳ ԱԱ 30006 30 0000» դիրքի /կոդի/ տակ, որը մաքսազերծման ժամանակ հարկվում է ԱԱՀ-ով, իսկ վաճառքից չի հարկվում ԱԱՀ-ով, արդյունքում վերջինս գտնում է, որ «Թեոֆարմա Իմպորտ» և «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկում գնման ենթակա ապրանքի՝ տուբերկուլինի համար ԱԱՀ հաշվարկելը իրավաչափ չէ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Թեոֆարմա Իմպորտ» և «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված վերջնական գները 24.12.2021թ. կայացած հակադարձ աճուրդից հետո հետևյալն են՝

«Ջիարջի» ՍՊԸ			
Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին ԱԱՀ-ով
14, 200, 000.00	2,840,000.00	17,040,000.00	378.67
«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ			
14, 400, 000.00	2,880,000.00	17,280,000.00	384

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ «Ջիարջի» ՍՊԸ-ն՝ 17,040,000.00 ՀՀ դրամ պայմանագրային գումարով, ճանաչվել է Ընթացակարգի հաղթող մասնակից:

5. Սույն գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից 21.07.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/43 ծածկագրով իրավապարտադիր որոշում:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի 19.01.2022թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ առողջապահության նախարարության 21.01.2022թ. թիվ ՎԳ/06.3/1489-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

3. Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:...

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Այսպես, ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար «Տուբերկուլինի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ են ներկայացրել «Նատալի Ֆարմ», «ՋԻԱՐՋԻ» և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Թեոֆարմա Իմպորտ» և «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված վերջնական գները 24.12.2021թ. կայացած հակադարձ աճուրդից հետո հետևյալն են՝

«Ջիարջի» ՍՊԸ			
Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին ԱԱՀ-ով
14, 200, 000.00	2,840,000.00	17,040,000.00	378.67
«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ			
14, 400, 000.00	2,880,000.00	17,280,000.00	384

Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ «Ջիարջի» ՍՊԸ-ն՝ 17,040,000.00 ՀՀ դրամ պայմանագրային գումարով, ճանաչվել է Ընթացակարգի հաղթող մասնակից:

Այսպիսով՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է այն փաստը, որ գնման ենթակա ապրանքը՝ տուբերկուլինը, գտնվում է «ԱՏԳ ԱԱ 30006 30 0000» դիրքի /կոդի/ տակ, որը մաքսազերծման ժամանակ հարկվում է ԱԱՀ-ով, իսկ վաճառքից չի հարկվում ԱԱՀ-ով, արդյունքում վերջինս գտնում է, որ «Թեոֆարմա Իմպորտ» և «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկում գնման ենթակա ապրանքի՝ տուբերկուլինի համար ԱԱՀ հաշվարկելը իրավաչափ չէ:

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ սույն գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից 21.07.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/43 ծածկագրով իրավապարտադիր որոշում, որի համաձայն՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 22.06.2021թ. ներկայացված բողոքը՝ նույնաբովանդակ փաստով, մերժվել է հետևյալ հիմնավորմամբ՝

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 1406-Ն որոշման հավելվածի՝ <u>ԱՏԳ ԱԱ 3006 30 000 0 ծածկագրի դիրքի անվանումն է՝ կոնտրաստային նյութեր ռենտգեն հետազոտությունների համար, ախտորոշման ռեագենտներ՝ նախատեսված հիվանդներին ներմուծելու համար</u>:

Ի պատասխան ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 07.07.2021թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/11073-2021 գրության՝ ՀՀ առողջապահության նախարարությունը 15.07.2021թ. թիվ ԱԱ//14829-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ տուբերկուլինի վերաբերյալ մասնագիտական կարծիք՝

1. ***<u>Տուբերկուլինը չի հանդիսանում կոնտրաստային նյութ</u>***
2. ***<u>Տուբերկուլինը չի հանդիսանում ախտորոշման ռեագենտ</u>***»:

Այսպիսով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ԳԲՔԱ-ՆԳ-2021/43 ծածկագրով կայացված որոշմամբ՝ հիմք ընդունելով տվյալ բնագավառը կարգավորող պետական մարմնի՝ ՀՀ առողջապահության նախարարության հարցման պատասխանը՝ գտել է, որ ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ գնման ենթակա ապրանքը՝ տուբերկուլինը, համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության մասնագիտական կարծիքի չի հանդիսանում կոնտրաստային նյութ կամ ախտորոշման ռեագենտ, ուստի վերջինս, չհանդիսանալով կոնտրաստային նյութ կամ ախտորոշման ռեագենտ, չի կարող դասվել ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 1406-Ն որոշման հավելվածով սահմանված ԱՏԳ ԱԱ 3006 30 000 0 ծածկագրի դիրքում, ինչպես պնդում է բողոքաբերը:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ ԳԲՔԱ-ՆԳ-2022/08 ծածկագրով բողոքի շրջանակներում բողոքարկվող Ընթացակարգի գնման առարկան ևս հանդիսանում է տուբերկուլինը, ուստի գտնում եմ, որ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սույն բողոքը ևս ենթակա է մերժման հետևյալ հիմքով՝

Այպսիսով՝ Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է</u>, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:***

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 26-րդ կետի համաձայն՝ ***Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:***

Նույն կարգի 27-րդ կետի համաձայն՝ ***Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:***

Վերոնշյալ իրավական կարգավորումների և փաստական հանգամանքների հիման վրա արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս գտնում եմ, որ կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք

հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ՝ եթե առկա չեն նոր երևան եկած հանգամանքներ, որոնք կարող են ազդել գործի ելքով որոշման կայացման վրա, ընդ որում՝ արձանագրում եմ, որ այդպիսի փաստեր սույն գործով առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից կողմից 19.01.2022թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**